մաս-մաս փոխադրում է վար, գյուղը, մինչդեռ ադրբեջանցին մեծ մասամբ ամբողջ պաշարը թողնում՝ պահում է իր մոտ սարում՝ գյուղում կամ ձմեռանոցում շատ քիչ մարդ, երբեմն ոչ մեկ մարդ թողած լինելով։ Ադրբեջանցին իր ավելցուկը ծախում է կամ տեղում, նրան այցելող միջնորդներին, կամ իջեցնելով մերձավոր շուկաները։ Միջին կարողություն ունեցող ադրբեջանցու վրանը լինում է և ավելի ընդարձակ, և ավելի սարքավորված գորգերով և փալասներով, քան թե միջին կարողություն ունեցող հայինը, սակայն երկու հարևան ազգությունների վրանակազմության ձևերի մեջ էական տարբերություններ չեն նկատվում։ Թե՛ ադրբեջանցին և թե՛ հայը խոտից մաքրելով և հարթեցնելով իր ընտրած հրապարակը և շուրջը անձրևաջուրը հեռացնելու համար թեթևակի փորելով, ցցում է գետնի մեջ իրար դիմաց ճրպուտնէր՝ ձողեր և գլուխները կռացնելով և իրար բերելով կապում. ստացվում են աղեղկամարներ։ Մինչդեռ Լոռում այդ ձողերը դասավորվում են գրեթե շուրջանակի և բոլորի գլուխները միացվում են կենտրոնում, որտեղ տակից դրվում է նեցուկ-սյուն, Զանգեզուրում ալաչուխի՝ վրանի կմախքը հյուսվում է անսյուն զուգահեռ աղեղներով։ Նախ և առաջ ցցվում են զուգահեռ աղեղներ աջից ձախ ուղղությամբ, ապա նրանց վրայից գալիս են աղեղներն առջևից դեպի ետ և հատելով մյուսներին ուղիղ անկյան տակ գոյացնում են թաղակապ տարածություն։ Եթե աղեղների ոտներն արձակելու լինենք և ամբողջ հյուսվածքը տափակացնելով գետնին պարզենք՝ կստացվի քառանկյունի աչքերով մի ցանց (գծ. 1)։

Եթե նույն ձևով վարվելու լինենք Լոռվա վրանի հետ, կստացվի ձողերի ճառագայթաձև դասավորություն՝ հետզհետե լայնացող համակենտրոն շրջաններով իրար հետ շաղկապված (գծ. 2)։



Գծ. 1.



Գծ. 2.

Զանգեզուրի ձևը թույլ է տալիս ազատորեն ընդարձակել ներսի տարածությունը աջից ձախ, կորացած աղեղների թիվը և դեպի առաջ կամ դեպի ետ ավելացնելով և այդ եղանակով վրանը երկարացնել, պահպանելով նրա լայնությունը։ Առաջ է գալիս թաղակապ տարածություն։ Ձողերի խաչաձևման անկյունները պարանով կամ մի այլ ձևով կապվում են, որպեսզի չշարժվեն քամուց և այդ ձողերի կմախքի շուրջը պատում են եղեգից կամ ուռենու բարակ ճյուղերից կապած երկար ու նեղ— մոտ 70—90 սմ լայնությամբ խսիրով՝ չաթնավ[30], այն հաշվով, որ առջևից մուտքի համար մնում է տարածություն,

[30] Հյուսողները մեծ մասամբ ադրբեջանցիներ են։